ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 01/21160 < 16 > 08 2023թ.

Արման Արմենի Ախպերջանյանին
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի նրբ., 10 շ., 13 բն.

Ուղարկվում է Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8300695351 և 8300695348 որոշումներն անփոփոխ թողնելու մասին որոշման օրինակը:

Առդիր՝ « 3 » թերթ:

Պետի պարտականությունների
ժամանակավոր կատարող,
ոստիկանության գնդապետ՝ *Ա. Մաթևոսյան*

Կատ.՝ Ռ.Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 14.07.2023թ.-ին կայացված թիվ 8300695351 և 8300695348 որոշումները անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

« 15 » օգոստոս 2023թ. ք. Երևան

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Ա. Մաթևոսյանս, վերանայելով Արման Արմենի Ախպերջանյանի (Այսուհետ՝ դիմող) 17.07.2023թ. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների բաժանմունք ստացված դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

14.07.2023թ.-ին՝ ժամը 14:45-ի սահմաններում Կոտայքի մարզի Վերին Պտղնի Մ-4 ավտոճանապարհին դիմողի վարած «ՄԱԶԴԱ» մակնիշի 10 CD 101 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը կանգնեցվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի ավագ սպարեկ Կարեն Խուդանյանի կողմից՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» և 7-րդ մասի «զ» կետերի խախտումների համար: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի և 124-րդ հոդվածի 11-րդ մասի հատկանիշներով կազմել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ և կայացվել վարչական իրավախախտումների վերաբերյալ թիվ 8300695351 և 8300695348 որոշումները՝ դիմողին համապատասխանաբար տուգանելով 10.000 ՀՀ դրամի չափով, տուգանային միավորի կիրառմաբ՝ 1 միավոր և 7.000 ՀՀ դրամի չափով, տուգանային միավորի կիրառմաբ՝ 0.5 միավոր:

Դիմողը 17.07.2023թ.-ին դիմումով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 14.07.2023թ.-ին կայացված թիվ 8300695351 և 8300695348 որոշումները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և լսված լինելու հնարավորություն տալու նպատակով դիմողին ուղարկվել է ծանուցում վարչական լսման օրվա և ժամի վերաբերյալ: Վերջինս ներկայանալով լսման՝ պնդել է դիմումում նշված հանգամանքները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ քննության են առնվել իրավախախտման բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա փաստական հանգամանքները, ինչի արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 14.07.2023թ.-ին կայացված թիվ 8300695351 և 8300695348 որոշումները ենթակա են կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողին ամրակցված անհատական տեսաձայնագրող սարքի տեսաձայնագրության ուսումնասիրությամբ՝ դիմողը չի հերքում իր կատարած իրավախախտումները՝ մասնավորապես նշում է, որ հեռախոսով բան էր նայում իսկ չամրակապված վարելու մասով նշում է, որ կանգ էր առել և երթևեկություն սկսելուց առաջ չէր ամրակապվել:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովան մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետի համաձայն՝ կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս մեխանիկական տրանսպորտային միջոցի, ինչպես նաև տրամվայի վարորդը պարտավոր է լինել ամրակապված և չփոխադրել անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորների: Թույլատրվում է գոտիներով չամրակապել մինչև 12 տարեկան երեխաներին (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված ամրակապելու համար պարտադիր դեպքերի), ինչպես նաև տրանսպորտային միջոցը վարել սովորեցնողին, երբ այն վարում է սովորողը, իսկ բնակավայրերում, բացի այդ, օպերատիվ ծառայությունների, թափքի գունագրաֆիկ երանգավորում ունեցող ավտոմոբիլների վարորդներին և ուղևորներին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, տուգանային միավորի կիրառմամբ՝ 1 միավոր:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի «զ» կետի համաձայն՝ վարորդին արգելվում է ընթացքի ժամանակ օգտվել ռադիոկապից և հեռախոսակապից, եթե դրանք կահավորված չեն առանց ձեռքերի օգտագործման այդ սարքերից օգտվելու սարքավորումներով (բացառությամբ ծառայողական առաջադրանքներ կատարող, օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների վարորդների), կամ ընթացքի ժամանակ ծխել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների (բացառությամբ ծառայողական առաջադրանքներ կատարող, օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների վարորդների) կողմից թեկուզ մեկ ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ ռադիոկապից և (կամ) հեռախոսակապից օգտվելը՝ առաջացնում է

տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, տուգանային միավորի կիրառմամբ՝ 1 միավոր:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Նույն օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, դիմողի արարքում առկա են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման հատկանիշներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 14.07.2023թ.-ին կայացված թիվ 8300695351 և 8300695348 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակ:

Պետի պարտականությունների ժամանակավոր
կատարող, ոստիկանության գնդապետ՝ *Ա. Մաթևոսյան*